ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԽԱԼԴԵ ԵՎ ԱՐՈՒԲԱՆԵ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Խալդեն (որի անունը Մուծածիրում հնչել է Ալդե, իսկ ասորեստանյան արձանագրություններից հայտնի է Խալդիա ձևով)[1] *ուրարտական դիցարանի գլխավոր աստվածությունն է։ Լինելով բուն ուրարտական երևույթ, նա, ամենայն հավանականությամբ, սկզբում թագավորող տոհմի հովանավորողն է եղել, իսկ հետագայում, պետականության կազմավորմանը զուգահեռ, ստացել է համաուրարտական նշանակություն*[2]։

Խալդեի պաշտամունքը քաղաքական մեծ նշանակություն ուներ. Ուրարտուի տիրակալները, հաշվի առնելով հպատակների վրա այդ պաշտամունքի ունեցած ազդեցությունը, իրենց իշխանությունը հայտարարում էին Խալդեից տրված. «Խալդեն ինձ արքայություն տվեց» արտահայտությունը հայտնի է ուրարտական գրեթե բոլոր թագավորների արձանագրություններից[3]։ *Խալդեն ինքն էլ հաճախ ընկալվում էր որպես արքա (նա «արքա Խալդե» է անվանված սեպագիր կավե սալիկներից մեկում)*[4] *և պատկերվում էր գահին նստած (նկ 1,)։ Ուրարտական տիրակալները (մինչև մ. թ. ա. 714 թ.) իրենց իշխանությունը օրինականացնելու նպատակով թագադրվում էին Մուծածիրում (Արդինե). ուր գտնվում էր Խալդեի գլխավոր տաճարը։ Ուրարտական արքայի օծման տեսարան է նկարագրված Սարգոն II-ի (մ. թ. ա. 721—705 թթ.) արձանագրություններից մեկում. «...և որդիներից նրան, ով պիտի ժառանգի գահը նրա, ոսկով, արծաթով և ամեն թանկարժեքով, պալատի հարստությամբ, Մուծածիր, Խալդեի առջև են առաջնորդում, և տալիս է նա իր նվերները՝ պարարտ եզներ ու ոչխարներ անհաշիվ, նրա առջև զոհ են մատուցում, ամբողջ նրա քաղաքի համար խնջույք են կազմակերպում, Խալդեի՝ նրա աստծու առջև թագադրում են նրան տիրակալության խույրով և տալիս են կրելու գայլսոնը ուրարտական թագավորության, իսկ նրա մարդիկ բացականչում են անունը նրա...»*[5]։

Իրենց իշխանությունը պաշտամունքային առումով է՛լ ավելի ամրապնդելու նպատակով Ուրարտուի արքաները աստվածացվում էին, և այդ արքաների պաշտամունքը իրագործվում էր Խալդեի տաճարում։ Այդ մասին է վկայում Ռուսա I-ի (մ. թ. ա. 735—713 թթ.) երկլեզվյան արձանագրությունը, ուր պատմվում է, թե ինչպես Մուծածիրի արքա և Խալդեի տաճարի քրմապետ Ուրզանան զոհեր է մատուցել թե՛ աստվածների և թե՛ Ռուսայի առջև. «Ուրզանան աստվածների առջև, աստվածների տաճարում, իմ առջև զոհեր մատուցեց»[6]։ *Սարգոն II-ի վկայությամբ Մուծածիրի տաճարում դրված է եղել Արգիշթե I-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) արձանը՝ «թագադրված աստղով՝ աստվածության խույրով [և] օրհնող աջ ձեռքով»*[7]։

---

[1] Г. А. Меликишвили. Древневосточные материалы по истории народов Закавказья, 1, Наири-Урарту. Тбилиси, 1954, с. 365, прим. 1. *Հոդվածում օգտագործված ուրարտերեն բառերի հայերեն տառադարձությունը առաջարկված է Հ. Հ. Կարագյոզյանի կողմից, որին և հայտնում ենք մեր շնորհակալությունը։*

[2] Գ. Ա. Ղափանցյան. *Ուրարտուի պատմությունը. Երևան, 1940, էջ 16։*

[3] Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960 (УКН), № 128, A3, стк. 17—19; № 155, G, стк. 2, № 276, стк. 25—26; № 156, AII+Ai, стк. 26—29. *«Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա». Երևան, 1981 (այսուհետև՝ Քրեստոմատիա), էջ 80։*

[4] И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963 (УПД), № 12, лиц. стор., стк. 4

[5] И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), № 49(309). «Вестник древней истории» (ВДИ), 1951, №№ 2—4.

[6] УКН, № 264, урарт. текст, стк. 11—12.

[7] АВИИУ, *№ 49 (367)։ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս «Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին». «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1։*

Ուշագրավ է, որ Ասորեստանի դեմ երկարամյա պայքարի ընթացքում ուրարտացիների համար ամենածանր կորուստը Մուծածիրի տաճարի կործանումն էր ու Խալդեի «գերեվարությունը»։ Այդ գիտակցում էր Ռուսա I-ի ախոյան Սարգոն II-ը, որը բացահայտ հաճույքով է պատմում այն մեծ վշտի մասին, որ ապրեց Ռուսա I-ը, Մուծածիրի անկման բոթը առնելով[8]։

Խալդեի անունով են առաջնորդվում Ուրարտուի արքաները իրենց գործունեության բոլոր ոլորտներում, լինի դա պատերազմ ու արհավիրք, թե խաղաղ շինարարություն։ Նրանց տարեգրությունները տարի առ տարի, գրեթե առանց բացառության, սկսվում են հետևյալ բառերով. «Խալդեն արշավեց...» և ավարտվում՝ «Հանուն Խալդեի այս մեծագործությունները մեկ տարում կատարեցի»[9]։ Հետևաբար Խալդեն շատ ուժ էր թշնամիների, և բարի՝ իր երկրպագուների համար, այսինքն՝ նա կարող է լինել պատճառ և՛ բարու, և՛ չարի, ընդունակ և՛ հիմնահատակ ավերելու, և՛ արարչագործելու։

Ուրարտական դիցարանը, ինչպես հայտնի է, խստիվ կարգավորված էր, այսինքն այն ժամանակ հստակ պատկերացվել է կրոնի մեծ նշանակությունը պետության ամրապնդման իմաստով[10]։ Ուրարտական կրոնական քաղաքականության մեջ ձգտում է նկատվում եթե ոչ առ միապաշտություն, ապա գոնե շատ կայուն գիծ՝ դիցարանում Խալդեի պաշտամունքի գերակշռություն ապահովելու ուղղությամբ[11]։ Այս առումով ուշագրավ է, որ Կարմիր բլուրի սեպագիր նամակներում խոսակցին դիմելու ընդունված ձև է. «թող իրավամբ սիրելի լինի կյանքը [քո] աստծուն»[12] արտահայտությունը։ Այստեղ աստված ասելով անկասկած հասկացվել է Խալդեն։ Թերևս Ուրարտուում չի եղել երկիր, ուր չլիներ Խալդեին ձոնված քաղաք, տաճար կամ պաշտամունքային որևէ այլ կառույց. ուրարտական դիցարանի մյուս աստվածությունների համար տաճարների կառուցման մասին փաստերը չնչին են։ Հետևաբար, բոլոր կրոնական արարողությունները արվում էին Խալդեի տաճարներում[13] և յուրաքանչյուր պաշտամունքային երթ կապվում էր և նրա անվան հետ[14]։ Խալդեն հովանավորն էր նաև բազմաթիվ երևույթների, որոնք ունեին իրենց հատուկ աստվածությունները և ըստ էության նա ինքնուրույն կարող էր ներկայացնել ամբողջ դիցարանը։ Բացի դրանից, այլևայլ աստվածություններ միաձուլվում էին Խալդեի մեջ, կարծես նրա պաշտամունքը ամբողջացնելու նպատակով[15]։

Հ. Ֆ. Լեման-Հաուպտը, Գ. Ա. Մելիքիշվիլին, Բ. Բ. Պիոտրովսկին հնարավոր են համա-

---

8 Եթե հավատալու լինենք ասուրական աղբյուրներին, ապա Ռուսա I-ը այդ պատճառով ինքնասպան է եղել. տե՛ս АВИИУ, № 46 (129); № 52; № 53։

9 УКН, № 127, I, стк. 17; № 155, А, стк. 28—29 и др.

10 «Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին». «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 163։

11 Հետաքրքիր է, որ Հին Եգիպտոսի պատմությունից ևս հայտնի է կրոնական քաղաքականության նման դեպք. երբ XVIII դինաստիան (մ. թ. ա. 1580—1314) հասել էր իր հզորության գագաթնակետին, Ամենհոթեպ IV-ը (Էքնաթոն), ձգտելով բացարձակ իշխանության, արգելեց բոլոր աստվածությունների պաշտամունքը, բացառությամբ Արեգակի աստված Աթոնի (տե՛ս В. И. Авдиев, А. А. Вигасин, М. А. Дандамев и др. История Древнего Востока. М., 1979, с. 59—61:

12 УПД, № 2, лиц. стор., стк. 5; № 3, лиц. стор., стк. 5; № 4, лиц. стор., стк. 5; № 7. лиц. стор., стк. 4.

13 Ավելի ուշ Նաբոնիդի քաղաքականությամբ էր առաջնորդվում և Բաբելոնի տիրակալ Նաբոնիդը (մ. թ. ա. 556—539 թթ.), որը ձգտում էր իր պետության բոլոր աստվածությունների համար ունենալ մեկ պաշտամունքային կենտրոն։ Այդ նպատակով երկրի բոլոր աստվածությունները բերվեցին Բաբելոն և դրվեցին Մարդուկի տաճարում (տե՛ս В. В. Струве. История Древнего Востока. М., 1941, էջ 352)։

14 Թերևս նման մի երթ է պատկերված Պետեր Կալմայերի հրատարակած գոտու մի բեկորի վրա (տե՛ս P. Calmeyer. Ikonographie und Stil urartäischer Bildwerke· Urartu, ein wiederentdechter Rivale Assyriens. Katalog der Ausstellung, München' 1976 (այսուհետև՝ Urartu), նկ. 39.

15 Տե՛ս «Ուրարտական Իվարշա աստվածության մասին». «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի». Երևան, 1981, № 7, էջ 16—22։ Տե՛ս նաև «Ուրարտական Արծիբեդինե աստվածության մասին». «Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված չորրորդ գիտական կոնֆերանս» (զեկուցման թեզիսներ). Երևան 1979, էջ 71։ Այս երևույթը թերևս հիշեցնում է Զրադաշտի [Զարատուշտրա (մ. թ. ա. 630—553 թթ.)]

ռել այն կարծիքը, թե Խալդեն եղել է երկնքի աստվածություն[16], նրա անունը ստուգաբանելով խայ «երկինք» բառով։ Որոշ գիտնականներ կապ են տեսնում հայերեն կախարդ և Խալդե անունների միջև[17]։

Խալդեն պատերազմի և հաղթանակի աստվածն էր, քանի որ ուրարտացիների պատկերացմամբ նա էր առաջնորդում իրենց բանակներին[18] ու հաղթանակ պարգևում[19]։ Նա նաև ընտանիքի, կյանքի, կենսասիրության աստվածությունն էր, որովհետև ամենից հաճախ նրանից էր խնդրվում «կյանք, ուրախություն, մեծություն»[20]։ Միևնույն ժամանակ նրան էր վերապահվում և սերնդի ոչնչացման իրավունքը, մի փաստ, որ վկայված է Կելյաշինի արձանագրությունում. «...Խալդեն սերմը նրա երկրից թող վերցնի»[21]։ Այս աստվածությունը, ինչպես ցույց են տվել Ի. Մ. Լոսևայի ուսումնասիրությունները, նաև պտղաբերության ու բուսականության աստվածն էր[22]։ Նա արվեստների, արհեստների ու երկրագործության հովանավորն էր, որովհետև նրա հրամանով և նրա անունից էին հիմնվում քաղաքներ, տաճարներ, գրվում արձանագրություններ, փորվում ջրանցքներ, գցվում այգիներ։

Բոլոր դիցարաններում չէ, որ գլխավոր աստվածությունը բացարձակ իշխանություն ունի. խեթա-խուռիական աշխարհում, օրինակ, մեկ անգամ չէ, որ վիճարկվել է Թեշուբի առաջնությունը, և երբեմն էան ընկալվում է որպես նրանից բարձր մի երևույթ։ Այդպիսին չէ Խալդեի պաշտամունքը Ուրարտուում. ինչպես նշվում է սեպագրերում՝ «Խալդեն հզոր է, հզոր բոլոր աստվածներից»[23]։ Խալդեին դիմելու ամենատարածված ձևը «տեր» արտահայտությունն է, որ բազմիցս վկայված է արձանագրություններում՝ «Խալդեին՝ տիրոջը»[24] ձևով։ Շատ են և նրան բնորոշող արտահայտությունները. ինչպես՝ «Խալդեի ողորմածությունը»[25], «Խալդեի զորությունը (ուժը)»[26], «Խալդեի աստվածայնությունը»[27], «Խալդեի մեծությունը»[28], «Խալդեի հրամանը»[29] և այլն։

Նշանակալից է այս աստվածության պաշտամունքի ազդեցությունը ուրարտական արվեստի վրա։ Նա հիմնական կերպար է որմնանկարչության, քանդակագործության մեջ և դրվագման արվեստում։ Բ. Բ. Պիոտրովսկին, հիմք ունենալով Կարմիր բլուրի նյութերը, պարզել է, որ Խալդեն պատկերվել է առյուծի վրա[30]։ Այժմ հայտնի են Խալդեի բազմաթիվ նման պատկեր-

---

կրոնական բարեփոխումները, երբ ցեղային աստվածությունները դարձան Ահուրամազդայի հատկանիշներ միայն [տե՛ս М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.). М., 1963, с. 234—235, прим. 3]:

[16] C. F. Lehmann-Haupt. Armenien Einst und Yetzt. II, 2, Berlin und Leipzig, 1931, S. 935; УКН, с. 427. Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с, 224.

[17] C. F. Lehmann-Haupt, Նշվ. աշխ., էջ 945։

[18] УКН, № 21, стк. 15; № 28, стк. 3—4; № 127, I, стк. 20 и др.

[19] УКН, № 21, стк. 5—6; № 22, стк. 5—6; № 127, I, стк. 5—6, 25 и др.

[20] УКН, № 93, № 94, № 95, № 276, лиц. стор., стк. 5—10.

[21] УКН, № 19, ассир. текст, стк. 36.

[22] И. М. Лосева. Некоторые урартские ювелирные изделия с изображением ритуальных сцен (к вопросу об иконографии бога Халди и богани Арубани).—«Древний мир» (сборник статей). М., 1962, с. 304.

[23] УКН, № 89, стк. 5.

[24] УКН, № 20, стк. 1—2; № 27, стк. 1; № 65, стк. 1—2; № 109, стк. 3 и др.

[25] УКН, № 27, стк. 17, 60.

[26] УКН, № 16, стк. 1; № 110, стк. 1—2; № 135, стк. 1—2 и др.

[27] УКН, № 27, стк. 12, 52.

[28] УКН, № 27, стк. 12, 52; № 28, стк. I; № 141, стк. 1 и др.

[29] УКН, № 97, стк. 5; № 127, II, стк. 32; № 136, стк. 1 и др.

[30] Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., էջ 223։ Մարգարիտ Ռիմշնայդերը և Ուրսուլա Ջայլդը վիճարկում են այս հանգամանքը։ Նրանց փաստարկումները, սակայն, բավարար չեն հրաժարվելու համար ընդունված տեսակետից (այս մասին տե՛ս Ս. Ա. Եսայան, Ս. Գ. Հմայակյան. Ուրարտական զգեստը. «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 208—209)։ Բացի առյուծից Խալդեի նշանակներից էր և արծիվը։ Առյուծը խորհրդանշում էր թերևս Խալդեի տիրակալությունը երկրի վրա, իսկ արծիվը՝ երկնքում (այս մասին տե՛ս «Ուրարտական Արծիբեդինե աստվածության մասին», էջ 71)։

ներ, ինչպես օրինակ՝ Կարմիր բլուրի հայտնի գոտու վրա դրվագված աստվածությունը[31], էրեբունեի որմնանկարը (նկ. 1_2)[32], Արծկեի բարձրաքանդակը (նկ. [illegible]), Սևբարթեփեից



Նկ. 1

գտնված մի շարք թիթեղների վրա եղած պատկերները[34] (տե՛ս, օրինակ, նկ. 1_1)։ Ամենից հաճախ նա պատկերվում էր առյուծի վրա կանգնած կամ պահին բաղմած, որին երբեմն մո-

[31] Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., նկ. 68։
[32] Կ. Լ. Հովհաննիսյան. Էրեբունիի որմնանկարները. Երևան, 1973, աղ. 46։
[33] P. Calmeyer, Նշվ. աշխ., նկար 43։
[34] H.-J. Kellner. Bronzene Weihe- und Votivgaben, Urartu, նկ. 47—49։

առնում է այծի (ոչի) եղջյուրներից բռնած մի կին[35] (Արուբանե դիցուհին)։ Այծերի մատուցման հանգամանքը կարող է որոշիչ նշանակություն ունենալ պատկերված ով լինելը պարզելու համար, քանի որ, ինչպես ցույց են տալիս ուրարտական արձանագրությունների տվյալները, այծեր զոհաբերվում էին միայն Խալդե աստծուն[36]։ Խալդեն հաճախ պատկերվում էր նաև որպես թևավոր (տե՛ս, օրինակ, նկ. 2_4) և կամ աղեղնավոր մի աստվածություն[37]։ Ու թերևս Մհերի դռան արձանագրության մեջ հիշատակված «Խալդեի զենքերը»[38] արտահայտությունը առնչվում է նաև նրա աղեղի հետ։ Ամենայն հավանականությամբ Խալդեի տաճարներում դրվել են նրա արձանները. այդ է վկայում Սարգոն II-ի հիշատակությունն այն մասին, թե ինչպես է ինքը հրամայել Մուծածիրից «տանել Ուրարտուի հույս Խալդեին»[39] և կամ տեղեկությունն այն մասին, որ Խալդեի արձանը Կիլիբանիթա երկրից տարվել էր Ռուսախինելե[40]։

Ֆ. Վ. Ֆյոնֆգի կարծիքով Խալդեն ընկալվել է որպես պատանի, հասուն տղամարդ և ծերունի[41], որը փաստորեն նշանակում է, թե նա ունենալով երիտասարդանալու կարողություն, հավերժություն է խորհրդանշել, նմանվելով «մեռնող-հարություն առնող» աստվածություններին։ Այս առումով հետաքրքիր է, որ Խալդեն հաճախ պատկերվել է որպես անմորուս երիտասարդ[42] և կամ հասուն, մորուքավոր այր[43] (նկ. 1_2)։ Թերևս Ուրարտուում վերոհիշյալ պաշտամունքի գոյության մասին են վկայում Սերբարթեփեի դրվագված բրոնզե թիթեղներից հայտնի միևնույն աստվածության երիցս կրկնվող պատկերները[44]։ Խալդեն պատկերվել է նաև անդեմ[45] ու թերևս, ինչպես գտնում է Պ. Կալմայերը, Վանի բարձրաքանդակը, ուր քանդակված են միայն խոցված ախոյանները, Խալդեին է ներկայացնում[46] (նկ. 1_3)։

Բնական է ենթադրել, որ ուրարտացիք, հարևան ժողովուրդների նման, ունեցել են իրենց դիցերգություններն ու աշխարհստեղծման սեփական տարբերակը, որից, սակայն, միայն պատառիկներ են մեզ հասել[47]։ Հայտնի է, որ արարչագործության և գլխավոր աստվածությունների մասին կար ընկալման երկու մակարդակ[48], պարզեցված՝ երբ որոշ բարդ հասկացություններ բացատրվում են պարզ օրինակներով, արարիչը ընկալվում է որպես մարդակերպ էակ, հաճախ երկսեռ բնույթի և նա այս կամ այն կերպ ստեղծում է տիեզերքն ու աստվածներին (օրինակ Խոում աստվածը եգիպտական դիցերգություններից մեկում արարում է դուրգի

---

35 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., նկ. 45։ H.-J. Kellner, նշվ. աշխ., նկ. 47, 49, 52։

36 Տե՛ս И. М. Лосева, նշվ. աշխ., էջ 306։ «Ուրարտական աստվածությունների և նրանց պաշտամունքային կենտրոնների մասին». «Աշխատություններ ՀՊՊԹ», № 6, Երևան 1975, էջ 4։

37 H.-J. Kellner, նշվ. աշխ., նկ. 49։

38 УКН, № 27, стк. 7, 41. Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով Խալդեն ունեցել է զինվորի կերպարանք և նրա հետ առնչվել է նաև վահանի ու նիզակի պաշտամունքը (տե՛ս նշվ. աշխ., էջ 224)։

39 АВИИУ, № 49 (309).

40 УПД, № 12, лиц. стор., стк. 4—5.

41 Այս մասին տե՛ս Մ. Ռիմշնայդերի մոտ՝ „Die urartäische Gottheiten. „Orientalia' Roma, 1963, 32, 2, S. 153.

42 Տե՛ս, օրինակ, H.-J. Kellner, նշվ. աշխ., նկ. 49, 54։

43 Կ. Լ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., աղ. 46։ R. D. Barnett. The hieroglyphic writings of Urartu. Anatolian Studies presented to Hans Gustav Güterbock on the occasion of his 65th birthday, Istanbul, 1974, նկ. XI.

44 H.-J. Kellner, նշվ. աշխ., նկ. 62։

45 P. Calmeyer, նշվ. աշխ., էջ 49։ M. Riemschneider, նշվ. աշխ., էջ 148։ Սակայն ճիշտ չեն այս հեղինակները, երբ պնդում են, թե Խալդեն ընդհանրապես մարդակերպ չի ընկալվել (այս մասին տե՛ս Ս. Ա. Նասյան, Ս. Գ. Համայակյան. նշվ. աշխ., էջ 204)։

46 P. Calmeyer, նշվ. աշխ., նկ. 45։

47 Տե՛ս УКН, N. 128, A4, стк. 1—13.

48 Տե՛ս Б. Оля. Боги тропической Африки. М., 1976, с. 16.

անիվի օգնությամբ)[49]: Մյուս առումով, արարիչ աստվածությունն անընկալելի մի երևույթ է, իսկ արարչագործությունը՝ անհասանելի խորհուրդ[50]:

Ամենայն հավանականությամբ, նման երկակի պատկերացում է եղել և Խալդեի մասին,



Նկ. 2

[49] М. Э. Матье. Древнеегипетские мифы. М.—Л., 1956, с. 14, 19.

[50] Այս կերպ է ընկալվում աշխարհստեղծումը, օրինակ, Ռիգվեդայի համապատասխան հիմներում (տե՛ս «Ригведа». М., 1972, «Гимн неизвестному богу», X, 121; «Гимн о сотворении мира», X, 122):

քանի որ նրա գլխավոր աստվածություն լինելը պիտի պայմանավորվեր իր արարչագործ էությամբ, ինչպես Աշուրը («որն արարել է ամեն ինչ»)[51] Ասորեստանի, Մարդուկը՝ Բաբելոնի և կամ Արամազդը («զմեծն և զարին Արամազդ, զարարիչն երկնի ու երկրի»)[52] հայերի համար։ Երբ Խալդն մարդակերպ էր ընկալվում, օժտվում էր մարդուն բնորոշ գծերով. նա թագավոր էր անսահմանափակ իշխանությամբ, հզոր պատերազմող, որը դեմ չէր սեղան նստելու, քանի որ նրան զոհաբերվող գինին և զոհերը նաև այդ են մատնանշում. բացի դրանից, Խալդնի Մուծածիրի տաճարում պահվում էին նրա մահճակալը, հագուստը և այլ պիտույքներ։ Մյուս առումով նա պատճառ էր անսկիզբ ու անվերջ, անդեմ ու անընկալելի։ Հավանաբար, այս երկրորդ ընկալման Խալդին են ցանկացել պատկերել Վանի բարձրաքանդակի վրա։

Խալդնի պաշտամունքը առնչվում էր թերևս և Լուսնթագ (Յուպիտեր) [Մարդուկ][53] մոլորակի հետ։ Ինչպես հայտնի է, Հին Աշխարհում Արեգակնային համակարգության յուրաքանչյուր մոլորակ, ինչպես և Արևն ու Լուսինը, առնչվում էին որոշակի աստվածության հետ։ Այս առումով բացառություն չէր նաև Ուրարտուն, քանի որ հայտնի է Լուսնի (Շելարդե) [Սին] և Արեգակի (Շիվինե) [Շամաշ] պաշտամունքների գոյությունն այստեղ։ Շելարդեն ամենից հաճախ պատկերվում էր լուսնի մահիկի ձևով[54] (հետաքրքիր է, որ Մուծածիրի տաճարում պահվում էին կիսալուսնի ձուլածո քանդակներ)[55]։ Շիվինեի խորհրդանիշը թերևս արեգակի թեվավոր սկավառակն էր[56] ու թևավոր խաչը[57]։

Ուրարտական արվեստում հազվադեպ չէին և աստղազարդ երկնքի պատկերման փորձերը, ինչպես Սերբարթեփեի դիցաբանական բովանդակությամբ պատկերներով դրվագված բրոնզե թիթեղների վրա է, ուր ադամ տարածությունը լցված է ուռուցիկ շրջանակներով, որոնք եղերված են ճառագայթաձև, մեկ կամ երկու շար կազմող կարճ գծիկներով[58] (նկ. 1_1, նկ. 2_2)։ Հայկական լեռնաշխարհում Արեգակնային համակարգության երկրակենտրոն մոդելի ստեղծման փորձեր հայտնի են մ. թ. ա. X դարից[59]։ Ուրարտական արվեստում հաճախ են հանդիպում պատկերներ՝ կազմված մեկ շրջանակից, որի շուրջը «պտտվում են» յոթ այլ օղակներ՝[60] հիշեցնելով այն ժամանակ հայտնի Արեգակնային համակարգությունը (նկ. 1_4)։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ Ուրարտուում գոյություն է ունեցել ոչ միայն Արեգակի ու Լուսնի, այլև մոլորակների պաշտամունք։ Եվ իսկապես, ուրարտական Սարդե (^{D}Sa-arde), Ծինուլարդե ^{D}Sinuła-arde), Արդե (^{D}Arde, հմմտ. նաև Շելարդե՝ ^{D}Sela-arde «Գիշերաստղ»[61]) դիցանունները կազմված են arde «աստղ»[62] բառով։ Այսինքն այս աստվածություններն առընչվել են գիշերային լուսատուների պաշտամունքի հետ։ Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով Սարդե դիցուհու խորհրդանիշներից մեկը կարող էր լինել Արուսյակ (Վեներա) մոլորակը[63]։ Հետևաբար, Արդեն որպես Ծինուլարդեից ավելի բարձրակարգ մի դիցուհի[64] նույնացել է Փայլածուի (Մերկուրիոս) [Նաբու], իսկ Ծինուլարդեն՝ Երևակի (Սատուրնոս [Նինուրթա][65] հետ,

---

51 АВИИУ, № 49 (112).

52 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց». Թիֆլիս, 1914, էջ 68։

53 Միջակ փակագծերում տրված են լուսատուներին համապատասխանող բաբելական դիցանունները։

54 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 226։

55 АВИИУ, № 51.

56 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 223։

57 O. A. Taşyürek. The urartian belts in the Adana regional museum. Ankara, 1975, աղ. 27։

58 H.-J. Kellner, նշվ. աշխ., նկ. 52—60։

59 Թ. Թումանյան, Հ. Մնացականյան. Բրոնզի դարի գոտի-օրացույց. Երևան, 1965, էջ 10, նկ. 2։

60 O. A. Taşyürek, նշվ. աշխ., նկ. 20; աղ. 5, 17, 56։

61 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 36։

62 Նույն տեղում։

63 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 226։

64 Տե՛ս «Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին», էջ 162։

65 Նաբուն Բաբելոնում գրի և թվերի աստվածն էր, իսկ Նինուրթան՝ հաղթանակի, այսինքն հնարավոր է, որ Արդեն Ուրարտուի իմաստնության, իսկ Ծինուլարդեն՝ հաղթանակի դիցուհին էր։

քանի որ այս երկու աստվածուհիների կապը Լուսնթագի և Հրատի (Մարս) [Ներգալ] հետ բացատրվում է։ Թերևս վերջիններին համապատասխան էին Խալդեն ու Թեյշեբան։ Այդ մասին է վկայում Արծկեի բարձրաքանդակը, ուր Խալդեի և Թեյշեբայի գլխազարդերը ավարտվում են աստղով (նկ. 2շ)։ Հետևաբար, Թեյշեբան որպես ռազմի աստված պիտի նույնանար Հրատի (վերջինիս պաշտամունքի գոյության մասին է վկայում թերևս այն, որ ուրարտական գոտիներից մեկին դրվագված է հեծյալ գլխավերևում աստղ[66], որը, հավանաբար, Հրատն է՝ պատերազմի կարմիր աստղը), իսկ Խալդեն, որպես գլխավոր աստվածություն՝ Լուսնթագի հետ։

Խալդեի պաշտամունքը միայն Ուրարտուով չէր սահմանափակվում. այն տարածվում էր Ուրարտական պետության քաղաքական ու մշակութային ազդեցության ոլորտների ընդլայնմանը զուգահեռ։ Մասնավորապես հայտնի են Ասորեստանում ապրող մարդկանց անուններ՝ կապված Խալդեի հետ. ինչպես. Խալդինասիր՝ «Խալդե պահապան», Խալդիաբուսուր՝ «Խալդե, պահպանիր հորա», Խալդիիբնի՝ «Խալդեն ստեղծեց», Խալդիուսուր՝ «Խալդե, պահպանիր», Խալդիէթիր՝ «Խալդեն փրկեց», Խալդիիլա՝ «Խալդեն իմ աստվածն է», Խալդիրիմանի «Խալդե, ողորմյա ինձ» և այլն[67]։ Այս առումով հետաքրքիր է, որ Մուծաժիրի Խալդեի տաճարում արարողություններ է կատարել նաև Ասորեստանի արքան, ինչպես վկայում է Մուծաժիրի թագավոր և Խալդեի տաճարի քրմապետ Ուրզանայի նամակը. «...Այն մասին, ինչ դու գրել ես ինձ, «առանց ասուրական թագավորի թույլտվության ոչ ոք թող չանի երկրպագություն», բայց երբ գալիս էր ասուրական թագավորը, մի՞թե ես խանգարում էի նրան. ինչ անում էի առաջ, արեցի և այժմ...»[68]։

Խալդեի և Հին Աշխարհի այլ գլխավոր աստվածությունների պաշտամունքներն ունեն շատ ընդհանրություններ. որոշ իմաստով անակնկալ նույնություններ են դիտվում նաև Խալդեի ու Յուպիտերի միջև. երկուսն էլ գլխավոր, պատերազմի, հաղթանակի, երկնքի, պտղաբերության և ընտանիքի աստվածներ են ու խաղողագործության հովանավորները։ Երկուսի պատվին էլ տարին երեք անգամ արարողություններ էին կատարվում, կապված խաղողի կամ գինու տոնի հետ. եթե հստակ հայտնի չեն խաղողի հասունացման այն փուլերը, որոնցով որոշվում էր այդ տոների ժամանակը Ուրարտուում, ապա Յուպիտերի առումով այդ հայտնի է Հին Հռոմի պատմությունից. այսպես, օգոստոսի 19-ին Vinalia rustica տոնն էր, որը սրբագործում էր խաղողահավաքի սկիզբը։ Այդ օրը Յուպիտերի քուրմը կտրում էր առաջին ողկույզը և Յուպիտերին զոհում մի հորթ։ Հոկտեմբերի 11-ին՝ Meditrinalia տոնն էր, որը խորհրդանշում էր բերքահավաքի ավարտը։ Այդ օրը փորձում էին խաղողի թարմ հյութը հին գինու հետ միասին։ Ապրիլի 23-ը Vinalia priora տոնն էր, երբ բացում էին վերջին հավաքի գինին և այն զեղում ի պատիվ Յուպիտերի։

Խալդեին ձոնված նույնպիսի արարողությունների գոյության մասին վկայություններ կան ուրարտական սեպագրերում, մասնավորապես Մհերի գոռ արձանագրությունում. «...երբ ծառերը ui aldini guduli, Խալդե աստծուն (թող լինի զոհ՝ երեք ոչխար, երեք ոչխար բոլոր աստվածներին։ Երբ խաղողի այգին tanuli զոհ՝ երեք ոչխար Խալդե աստծուն, երեք ոչխար բոլոր աստվածներին։ Երբ խաղողի այգին mesuri զոհ՝ երեք ոչխար Խալդե աստծուն, երեք ոչխար բոլոր աստվածներին»[69]։ Խալդեին գինով զոհաբերություններ կատարելու սովորության մասին է վկայում Սարգոն II-ի հայտարարությունն այն մասին, թե Մուծաժիրից նա տարել է «...մեծ պղնձե կաթսա, որը Ուրարտուի արքաները Խալդեին զոհեր մատուցելիս լցնում էին գինով»[70]։ Նկատի ունենալով Խալդեի պաշտամունքի մեծ նշանակությունը Ուրարտուում, Գ. Ա. Ղափանցյանը բնութագրել է այն որպես «խալդամոլություն»[71]։ Թերևս նույն հանգամանքը նը-

---

66 O. A. Tasyurek, նշվ. աշխ., աղ. 20։

67 АВИИУ, № 80.

68 АВИИУ, № 50 (2)։ Է. Ա. Գրանտովսկու կարծիքով Ուրարտուի հարավային մարզերում Խալդեի պաշտամունքը առնչվում էր և իրանական հավատալիքների հետ (տե՛ս Э. А. Грантовский. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, էջ 307)։

69 УКН, № 27, стр. 27—31, 86—94.

70 АВИИУ, № 49 (367).

71 Գ. Ա. Ղափանցյան. նշվ. աշխ., էջ 114։

կատի ունենալով է նաև, որ երկար ժամանակ ընդունված էր Ուրարտուի բնակիչներին «խալդեր» անվանել, դա համարելով ուրարտացիների ինքնանունը[72]։

Հայաստանում ուրարտական պետականության կործանումից հետո Խալդեի պաշտամունքը չվերացավ։ Չնայած հետուրարտական Հայաստանի մասին գրավոր աղբյուրների սակավությանը, մեզ հասած այդ ժամանակի հայերի հատուկենտ անունների թվում կա Հալդիտա (Խալդեն մեծ է)[73] անձնանունը։ Հալդիտան Դարեհ I-ի (Ձ. թ. ա. 521—486 թթ.) իշխանության դեմ ապստամբած Բարելոնի առաջնորդ, ազգությամբ հայ Արախայի հայրն էր[74]։

Ա.ռուբանե[75] (Ուարուբանե[76], Արուբաինե[77]) Ուրարտուի գլխավոր աստվածուհին էր և Խալդեի կինը[78]։ Նա միակ դիցուհին է, որի անունը հիշատակված է արձանագրություններում (բացառություն է, իհարկե, Մհերի դռան արձանագրությունը, ուր ի մի են բերված բոլոր ուրարտական աստվածությունները)։ Հետաքրքիր է, որ Արուբանեն վկայակոչված է առանց բացառության միայն այն արձանագրություններում, ուր խոսվում է կամ շինարարության (տաճարի, ամրոցի և այլն), կամ այգի գցելու մասին[79]։ Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ Արուբանեն եղել է պտղաբերության, ինչպես նաև արհեստներն ու արվեստները հովանավորող դիցուհի։ Որ նա աստվածուհիների տիրուհին[80] լինելով հանդերձ (Մհերի դռան արձանագրությունում նա է գլխավորում Ուրարտուի դիցուհիների ցանկը) նաև պտղաբերության աստվածուհին էր վկայում է այն, որ Արուբանեի մուծածիրյան տարբերակը՝ Բագմաշթուն (Բաղրարթուն), Սարդոն II-ի արձանագրություններից մեկում ընկալվել է որպես Իշթար[81], ուրեմն այս երկու դիցուհիների պաշտամունքը համընկել է։ Եվ եթե նկատի ունենանք, որ Իշթարը պտղաբերության (բեղմնավորության), սիրո և պատերազմի աստվածությունն էր (վերջին հատկանիշը ուսումնասիրողների կարծիքով ուշ երևույթ է, մ. թ. ա. VIII—VII դդ.)[82], ապա թերևս Արուբանեն եղել է Ուրարտուի պտղաբերության դիցուհին։ Ռազմականությունը բացառվում է, քանի որ նրա անունը հիշատակված չէ ռազմական բնույթի արձանագրություններում։ Որպես պտղաբերության աստվածուհի է նա ներկայանում նաև ուրարտական պատկերաքանդակում[83], ուր հաճախ ներկայացվում էր որպես գահին նստած թագուհի՝ ձեռքին ճյուղ (կենաց ծառի պատկերման տարբերակներից մեկը Ուրարտուում)։ Ճյուղի առկայությունն աստվածուհու ձեռքին Ի. Մ. Լոսևան պատճառաբանում է Արուբանեի նաև բուսականության աստվածուհի լինելու հանգամանքով[84], որը ինքնին կապվում է պտղաբերություն հաս-

---

72 К. Ф. Леман-Гаупт. Вступительная лекция по истории и культуре халдов.—«Труды Тбилисского Госунта», 1938, № 6, с. 246. *Այս տեսակետը վիճարկում էր դեռևս Ի. Ի. Մեշչանինովը* (И. И. Мещанинов. Древневанский бог Халд-Халдиа.—«Восточные записки», I, Л., 1927, с. 176—181). *Այս մասին տե՛ս նաև* Б. Б. Пиотровский, *նշվ. աշխ., էջ 117—121։*

73 И. М. Дьяконов. Предыстория армянского народа. М., 1968, с. 235, прим. 116.

74 *Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ Ա, Երևան, 1944, էջ 50—51։ Գ. Մ. Նալբանդյան. Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը. Երևան, 1964, էջ 21։*

75 УКН, № 65, стк. 34.

76 УКН, № 25, стк. 5, 10.

77 УКН, № 27, стк. 27. *Այս դիցանունը Հ. Հ. Կարագյոզյանը հայերեն տառադարձում է նաև Վարուբանե և Յարուբանե ձևերով (տե՛ս «Քրեստոմատիա», էջ 44, ծան. 2)։*

78 Г. А. Меликишвили. Наири-Урарту, с. 371.

79 УКН, № 25, № 65; Н. В. Арутюнян. Новые урартские надписи Кармир-блура. Ереван, 1966, № 1.

80 Г. А. Меликишвили. Наири-Урарту, с. 371.

81 Э. А. Грантовский, *նշվ. աշխ., էջ 301, 304։*

82 *Այս մասին տե՛ս Հ. Գ. Մելքոնյան. Ադիաբենի պետությունը և Հայաստանը. Երևան, 1980, էջ 14։*

83 *Տե՛ս* И. М. Лосева, *նշվ. աշխ., էջ 307—310։*

84 *Նույն տեղում, էջ 308։*

կացության հետ։ Այս դիրքով է Արուբանեն ներկայացված Թոփրաքկալեի մեդալիոնի վրա[85] (նկ. 2_2)։ Թերևս նույն մեկնաբանությունն ունի նաև Վանում հայտնաբերված Արուբանեի արձանիկը[86] (նկ. 2_1)։ Այստեղ չեն պահպանվել բակաթոռն ու ճյուղը, սակայն դիցուհու կեցվածքն ու հագուստը (երկար, մինչև կրունկները իջնող զգեստ և գլխաշոր) համընկնում են մեդալիոնի պատկերի հետ[87]։

Թերևս որպես պտղաբերության դիցուհի և Խալդեի կին, Արուբանեն ևս ընկալվել ու պատկերվել է և՛ մանկամարդ. և՛ հասուն տարիքում։ Հաճախ նա պատկերվում էր Խալդեի ընկերակցությամբ՝ ձեռքին դրոշ (նկ. 2_4) կամ այծի եղջյուրներից բռնած՝ Խալդեի դիմաց կանգնած[88]։ Նման մի տեսարան է ներկայացված Սերբարթեփեից գտնված բրոնզե թիթեղներից մեկի վրա։ Այստեղ Խալդեն ունի նորաբուս մորուք, իսկ Արուբանեն՝ երիտասարդ կնոջ (աղջկա) տեսքով է և առանց գլխաշորի[89] (նկ. 2_4)։ Ի տարբերություն Ուրարտուի կանանց, աղջիկների համար գլխաշորը պարտադիր չէր[90]։ Թերևս այս թիթեղին Արուբանեն և Խալդեն ներկայացված են որպես պատանիներ, ի տարբերություն այն դեպքերի, երբ Խալդեն պատկերվում էր թավ մորուքով (նկ. 1_2), իսկ Արուբանեն՝ հասուն կնոջ տեսքով, մինչև ուսերը կամ կրունկները հասնող գլխաշորով[91] (նկ. $2_{1,3}$)։ Եվ եթե Արուբանեի նախնական պաշտամունքում նման պատկերացում չի եղել (խոսքը հավերժություն խորհրդանշելու մասին է, որը սերտորեն առնչվում է պտղաբերություն հասկացության հետ), ապա այն կարող էր ի հայտ գալ ավելի ուշ, Խալդեի պաշտամունքի ազդեցությամբ, չխախտելու համար ցանկալի ներդաշնակությունը։

Արուբանեի պաշտամունքային կենտրոնը Ուրարտուում եղել է Խալդեի քաղաքը՝ Արդինեն (Մուծածիր)։ Այս դիցուհին Մուծածիրում, ինչպես վկայում են ասուրական աղբյուրները, կրել է այլ՝ Բագմաշթու կամ Բագբարթու {^{AN}Ba-ag-mas (mas) (bar) (par)-tu (ti)-tum}[92] անունը։ Այս է վկայում դեպի Մուծածիր Սարգոն II-ի կատարած արշավանքի մասին պատմող արձանագրությունը, ուր հիշատակվում են Մուծածիրի Խալդեի տաճարից տարված՝ «կնիքով ոսկյա մատանի՝ հաստատելու համար որոշումները Բագմաշթուի, Խալդեի կնոջ» կամ՝ «...ատվածային հարդարանքի տարբեր քարեր, գոհարներ՝ Խալդեի և Բագմաշթուի, նրա կնոջ»[93] կամ՝ «մուսասիրցի Ուրդանայից Խալդեին՝ նրա աստծուն, և Բագմաշթուին՝ նրա աստվածուհուն»[94] (վերջին փաստը թերևս վկայում է այն մասին, որ Մուծածիրում դրված են եղել նաև Խալդեի ու Բագմաշթուի արձանները և դրանք է հիշատակում Սարգոնը)[95]։

Հետազոտողների մեծ մասի կարծիքով Բագմաշթու դիցանունը իրանական ծագում ունի[96]. Գ. Ա. Մելիքիշվիլին, օրինակ, այն կապում է Բագամաղդա բառի հետ[97]։ Է. Ա. Գրանտովսկին գտնում է, որ Բագմաշթուն պաշտվել է որպես Խալդեի իգական կրկնու-

---

85 Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., նկ. 45։

86 Նույն տեղում, նկ. 46։ Այն մասին, որ այստեղ պատկերված է Արուբանեն տե՛ս նույնի Урартская бронзовая статуэтка Государственного музея Истории Армении.—«Советская археология», 1940, № 6, с. 91:

87 И. М. Лосева, Նշվ. աշխ., էջ 308։

88 H.-J. Kellner, Նշվ. աշխ., նկ. 49, 53, 54։ Б. Б Пиотровский, Ванское царство, рис. 45: Ի. Մ. Լոսևան այծի առկայությունը այստեղ ընկալում է որպես վկայություն Խալդեի բուսական աշխարհի աստվածություն լինելու մասին (նույն տեղում)։

89 H.-J. Kellner, Նշվ. աշխ., նկ. 54։

90 Հայ աղջիկների տարազում ևս գլխաշորը պարտադիր չէր (տե՛ս, օրինակ, Ե. Լալայան. Վասպուրականի ազգագրությունը. «Ազգագրական հանդես», 1910, էջ 137—138։

91 Տե՛ս H.-J. Kellner, Նշվ. աշխ., նկ. 53, 56. Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., նկ. 45, 46։

92 Э. А. Грантовский, Նշվ. աշխ., էջ 302։

93 АВИИУ, № 49 (367).

94 АВИИУ, № 49 (415).

95 Б. Б. Пиотровский, Նշվ. աշխ., էջ 223։

96 Այս մասին եղած գրականության մանրամասն քննությունը տե՛ս Э. А. Грантовский, Նշվ. աշխ., էջ 302—305։

97 Տե՛ս Г. А. Меликишвили. Наири-Урарту, с. 372.

թյուն։ Նրան համարում է տեղական, մուծածիրյան աստվածություն՝ հիմնվելով Ի. Մ. Լոսևայի այն դիտողության վրա, թե Սարգոն II-ի արձանագրությունում Խալդեն և Բագմաշթուն նկատվում են որպես Ուրդանայի աստվածություններ, այն դեպքում, երբ Ռուսայի աստված նկատվում է միայն Խալդեն[98]։ Նա համամիտ է և Դ. Ա. Մելիքիշվիլու այն տեսակետի հետ, թե իրանական ծագում ունեցող այս դիցանունը Մուծածիրում բնակվող իրանական տարրի ազդեցությամբ նույնացվել է Արուբանեի հետ՝ գրավելով նրա տեղը Խալդեի կողքին[99]։ Ի. Մ. Դյակոնովը Բագմաշթու և բագա-մազդա («աստված իմաստուն») համադրությունը սխալ է հասարում, ընդունելով, սակայն, Արուբանե-Բագմաշթու նույնությունը[100]։ Ա. Շ. Մնացականյանը Բագմաշթու դիցանունը ստուգաբանում է հայերեն մաստ. մազդ («պինդ», «դիմացկուն», «ամուր», «հաստատուն», «կայուն») բառերով և համադրում է Արամազդ անվան հետ[101]։

Այս դիցանունը Բագմաշթու ձևով է կարդում և Ս. Գ. Պետրոսյանը, նրան վերագրելով, սակայն, թրակա-փռյուգական ծագում և ստուգաբանում է փաստորեն bag «աստված» և mastu (mastu) հունարեն μαστός («լանջ», «կուրծք», «ստինք», ապա նաև «կլորավուն բարձունք», «բլրակ», «բլուր») բառերով[102]։ Իր այս դիտողությունը Ս. Գ. Պետրոսյանը հիմնավորում է Մուծածիրի տարածքում թրակա-փռյուգական ծագում ունեցող ցեղերի առկայության հնարավորությամբ[103]։

Գ. Ա. Ղափանցյանը այս դիցուհու անունը կարդում է Բաղբարթու ձևով և իրանական ծագում է վերագրում, բացատրելով bag «բաժ», «բաժանել», «բաժին» ու bar «կրել», «բերել» բառերով և թարգմանում է՝ «բաժինը կրող» [«долю (удел) носящая»]։ Իսկ թու-ն նա համարում է «սեմական իգական վերջավորություն»՝ ավելացված ասորեստանցիների կողմից[104]։ Ավելի վաղ Գ. Ա. Ղափանցյանը կապ էր տեսնում Մհերի դռան արձանագրությունում հիշատակված Բարթիա և Բաղբարթու դիցանունների միջև[105]։ Սակայն հետագայում նա հրաժարվեց է իր այս տեսակետից, քանի որ գտնում էր, որ Բաղբարթուն Մհերի դռան արձանագրության մեջ հիշատակված չէ[106]։

Լ. Ն. Բիյագովը նույնպես այս դիցանունը կարդում է Բաղբարթու ձևով, ստուգաբանելով այն bag «աստված» և bar «բերք» բառերով. «թու» մասնիկը նա համարում է աքադերենի իգական սեռի վերջավորություն և Բաղբարթու անունը թարգմանում «պտղաբերության աստվածուհի» ձևով[107]։

---

98 И. М. Лосева, նշվ. աշխ., էջ 309։

99 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 372։ Э. А. Грантовский, նշվ. աշխ., էջ 302։

100 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 191, ծան. 3։

101 Ա. Մ. Մնացականյան. Մաշտոց անվան ստուգաբանությունը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1979, № 8, էջ 86—92։

102 Ս. Գ. Պետրոսյան. Հին Մարասաանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 52—53, ծան. 46։

103 Նույն տեղում, էջ 52—53։ Թթե ճիշտ է Գ. Ա. Մելիքիշվիլու այն տեսակետը, թե Արգիշթի I-ի տարեգրության մեջ Խալդեի պաշտամունքի հետ առնչվող հասկացություններից մեկը անվանված է astiuzi «աստված», «կուռք», որը նրա կարծիքով առնչվում է հայերեն «աստված» բառի հետ (տե՛ս Г. А. Меликишвили. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I.—«Переднеазиатский сборник», III (история и филология стран Древнего Востока. М., 1979. с. 174), ապա Ս. Գ. Պետրոսյանի վերոհիշյալ տեսակետը լրացուցիչ հիմնավորում է ստանում, քանի որ հայերեն «աստված» հասկացությանը վերագրվում է փռյուգական ծագում (տե՛ս Н. Я. Марр, Бог Σαβαζιος у армян. „Известия Имп. академии наук“, 1911, с. 759—774. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 2, Երևան, 1972, էջ 280։

104 Г. А. Капанцян. Об урартском божестве Шебиту. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, №№ 11—12, էջ 9։

105 Գ. Ա. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 47։

106 Г. А. Капанцян. Об урартском божестве Шебиту, с. 9.

107 Л. Н. Биягов. К вопросу об интерпретации Халди и Арубани—Багбарту. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 11, էջ 100։ Այս հոդվածում Լ. Ն. Բիյագովը հիշատա-

Այսպիսով, Բագմաշթու (Բագբարթու) դիցանունը ստուգաբանվում է տարբեր կերպ, սակայն այս հարցին անդրադարձած մասնագետները համամիտ են, որ դիցուհին Մուծածիրում փոխարինում է Արուբանեին և պտղաբերության աստվածուհի է։ Վերջինիս առկայությունը Մուծածիրում պայմանավորված էր Խալդեի պաշտամունքը ամբողջացնելու անհրաժեշտությամբ։

Ուշագրավ է, որ Խալդեի պաշտամունքային կենտրոնը՝ Մուծածիրը, գտնվում էր Մեծ ու Փոքր Զաբ գետերի միջև ընկած տարածքում (Ուրմիա լճից հարավ-արևմուտք, այժմյան Ռեվանդուզ քաղաքի շրջակայքում)108. Մեծ Զաբի միջին հոսանքում էր գտնվում Թեյշեբայի պաշտամունքային մեծ կենտրոն Կումենու (ըստ Մհերի գոռ արձանագրության տվյալների)109 կամ Կումե (ըստ ասուրական աղբյուրների)110 քաղաքը, որը նաև խուռիների գլխավոր աստված Թեշուբի կարևոր պաշտամունքային կենտրոնն էր111.

Հետաքրքիր է, որ Ադադ-Ներարի II-ի (մ. թ. ա. 911—891 թթ.) թողած վավերագրերում Կումեի աստվածությունն անվանված է ոչ թե Թեշուբ, այլ Ադադ. վերջինս պաշտամունքով համընկնում էր Թեշուբի հետ (բնության տարերքի աստված) և նրա ասուրական համարժեքն էր112։

Մեծ ու Փոքր Զաբ գետերի միջև, Վանա լճից հարավ-արևելք (որը ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու ուրարտական ցեղային միության կազմավորման շրջանն էր)113, ասուրական աղբյուրներում հիշատակվում է Իշթարի դիցուհու պաշտամունքային մեծ կենտրոն Արբա-իլու114 (անտիկ ժամանակների Արբելա քաղաքը)։ Բնականաբար, պիտի ենթադրել, որ «Արբելայի Իշթար» անվան տակ նկատի է առնված ուրարտական կամ խուռիական որևէ դիցուհի, որի պաշտամունքը նույնացել է Իշթարի հետ, մանավանդ որ ասուրական արձանագրություններում հստակ տարբերակվում են «Նինվեի Իշթար», «Արբելայի Իշթար», «Բաբելոնի Իշթար»115 հասկացությունները։ Հետևաբար, Արբելայի դիցուհին կարող էին լինել Խուբան՝ խուռիական խեբաթը, Թեյշեբայի (Թեշուբի) զուգակից աստվածուհին116, Սարդեն117 կամ Արուբանեն։ Թերևս «Արբելայի Իշթար» ասելով նկատի է առնվել Արուբանեն։ Այդ մասին է վկայում Արբելա քաղաքի անունը118։ Ուրբիլում՝ ըստ բաբելական և Արբա-իլու՝ ըստ ասուրական արձանագրությունների119 փաստորեն նշանակում է «Ուրբ կամ Արբա աստծու քաղաք»։ Ուարուբանե կամ Արու-

---

կուս է Բագբարթուի անվան՝ Յա. Հարմատայի առաջարկած բացատրությունը՝ «աստծու կին» (տե՛ս նույն տեղում)։

108 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 18, 36։

109 УКН, № 27, стр. 14, 55.

110 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 166։

111 И. М. Дьяконов. Г. А. Меликишвили, Древневосточные материалы по истории народов Закавказья, I, Наири-Урарту.—«ВДИ», 1956, № 2, с. 67, прим. 2.

112 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 166։

113 Նույն տեղում, էջ 168։

114 Տե՛ս Հ. Գ. Մելքոնյան. Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 5, 6, 15 և այլուր։

115 АВИИУ, № 67 (к); 72 (II, 95 и сл.). M. Streck. Assurbanipal und Letzten Assyrischen Könige. II. Texte. Leipzig, 1916, 1; Annalen, col. I, 15, 16; 42—43; Col. II, 128; Col. VII. 53—54; Der Cylynder, 11, 13, 23.

116 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 171։ Вяч. Вс. Иванов. Луна, упавшая с неба. М., 1977, էջ 308։

117 Այս դիցուհուն Գ. Ա. Մելիքիշվիլին համադրում է Իշթարի հետ (տե՛ս նշվ. աշխ., էջ 374)։ Չնայած սրան, Սարդեն երկրորդական աստվածություն էր և չուներ պաշտամունքային այն մեծ նշանակությունը, որով աշքի էին ընկնում Խուբան ու Արուբանեն։

118 Հ. Գ. Մելքոնյանը գտնում է, որ «Ուրբիլում», «Արբա-իլու», կամ «Արբելա» անունը... կապ պետք է ունեցած լինի ինչ-որ աստծո անվան հետ, որովհետև այդ ժամանակներում կառուցված քաղաքների անունները, ինչպես օրինակ՝ Նինվեն, Աշուրը, Ուրը աստվածների անուններ են եղել» (նշվ. աշխ., էջ 7, ծան. 7)։

119 Նույն տեղում, էջ 6։ Ասորեստանցիները այս քաղաքի անունը բացատրում էին «չորս աստված» ձևով, հանգամանք, որը զուրկ է պատմական հիմքից (տե՛ս նույն տեղում)։

բանն դիցանունը Միջագետքում կարող էր հնչել Ուարբա (Ուրբ), Արբա ձևով, քանի որ ուրարտերեն լեզվում երկու բաղաձայնների միջև հայտնի է u-ի անկման և այլ դեպք, ինչպես ^{D}Elipure[120], ^{D}Elipre[121], ne-ն *այստեղ կարող է լինել ուրարտերենի ուղղականի հոլովակերտ մասնիկ, ինչպես, օրինակ,* ^{D}Haldine[122], ^{D}Halde[123]: *Հետևաբար, «Արբելայի Իշթարը» և Արուբանեն նույն դիցուհիներն են։ «Արբելայի Իշթարի» պաշտամունքը, հայտնի լինելով շատ ամենի վաղ ժամանակներից, հարատևել է և անտիկ շրջանում, երբ այս, ինչպես և նման այլ դիցուհիների պաշտամունքները, կորցնելով իրենց ինքնուրույնությունը, նույնացան Անահիտի հետ*[124]:

ОБ УРАРТСКИХ БОЖЕСТВАХ ХАЛДЕ И АРУБАНЕ

С. Г. АМАЯКЯН

(Резюме)

Халде—главное божество урартского пантеона. Крупнейший религиозный центр Халде город Мусасир находился юго-восточнее Ванского озера, между реками Большой и Малый Заб. Эта территория считается местом образования первого союза урартских племен. Возможно, Халде первоначально был покровителем племени или рода, возглавлявшего этот союз. Позднее, в связи с образованием урартской государственности, культ Халде приобретает общеурартское значение. Сознавая большое влияние культа Халде на подданных Урартского государства, правители Урарту объявляли себя и свои династии божественными, а царскую власть полученной из рук Халде. Короновались они в Мусасирском храме Халде. В искусстве Урарту это божество—главный персонаж. Известны его изображения в облике царя, божества плодородия и войны. Желая воспроизвести вечно существующего Халде, его изображали то юношей, то старцем. Известна также попытка воспроизведения Халде безликим (Ванский барельеф). Здесь он, по-видимому, выступает в качестве создателя вселенной. Символами Халде могли быть лев, орел и планета Юпитер. По представлениям урартов, Халде был началом добра и зла, божеством неба, войны, плодородия, покровителем семьи, жизни, ремесел, искусств и виноградарства. Культ Халде, связанный с последним явлением, совпадает с культом римского Юпитера—покровителя виноградарства. В религии Урарту прослеживается определенная тенденция консолидации всех божеств в культе Халде.

Арубане, главная богиня урартского пантеона, супруга Халде, была покровительницей плодородия, ремесел и искусств. В Мусасире эта богиня носила имя Багбар-(маш)ту. Арубане, по-видимому, фигурирует в ассирийских надписях под именем «Иштар Арбелы», так как город Арбела находился в районе, где с давнейших времен преобладало хурритское население и где (в междуречье Большого и Малого Заба) находились крупные религиозные центры главных урартских божеств Халде и Тейшебы—Мусасир и Кумену (Кумми). Кроме того, название Арбелы (Урбилум, Арба-илу) можно перевести как «(город) бога Ар(у)ба(не)».

Культ Халде и Арубане не исчез с падением урартской государственности и был известен в раннеармянскую и в античную эпохи.

---

120 УКН, № 104, стк. 2, 14:

121 УКН, № 27, стк. 8, 43.

122 УКН, № 21, стк. 15. *Անվան ուղղական-երկրորդ հոլովն է։*

123 УКН, № 39, стк. 4. *Անվան ուղղական-առաջին հոլովն է։*

124 *Հ. Գ. Միքրոնյան. նշվ. աշխ., էջ 68։* «Культ Великой госпожи» в стране Шубрия» (Научная сессия, Гос. Музей Истории Армении, Музей основания Еревана «Эребуни». Тезисы докладов. Ереван, 1981, с. 5—6).